Երկիր Ծիրանի

Գյումրու քաղաքապետ

Սամվել Բալասանյանին

«Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ

Արամ Ենոքյանից

Հեռ՝ +374.98.87.10.16

+374.93.80.66.90

+374.55.40.39.00

Էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com

30.03.2018թ.

ԴԻՄՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի ապրիլի 26-ին և ապրիլի 27-ին Գյումրի քաղաքի Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի հարակից տարածքում Զարուհի Փոստանջյանը նախատեսում է անցկացնել հանրահավաք և երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 17:00–ին և ավարտվելու է մինչև 22:00-ն:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՎԱԾ է 03.04 20 18
ՄՈՒՏՔԱԳՐԱՆՑՎԱԾ է N 3936

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վաղեմության բռնությունների:

Կարգադրիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 1000: Երթի երթուղին է՝ Սայաթ Նովա փողոց-Անկախության փողոց-Շիրազի փողոց-Հաղթանակ պողոտա-Սպանդարյան փողոց-Վարդանանց հրապարակ-Շահումյան փողոց-Ռուսթավելի փողոց-Սայաթ Նովա փողոց:

Երթը սկսվելու է 19:00-ին և ավարտվելու է 22:00-ին:

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, թռուցիկներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Կից ներկայացվում է՝

- Հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը (Արամ Ենոքյան)
- Հավաքի ղեկավարի անձնագրի պատճենը (Զարուհի Փոստանջյան)

Դիմող՝ Արամ Ենոքյան

«Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ

«Երկիր Ծիրանի» կուսակցություն - Մաշտոցի 33/1 առաջին տարածք
0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն
yerkirtsiraniparty@gmail.com - +37493806690 - www.yerkirtsirani.am